ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ և 244.9-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի և հիմք ընդունելով հողերի օգտագործման և պահպանման խախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության կողմից 2019 թվականի նոյեմբերի 15-ին կազմված N 12 ակտը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավար ***Հրաչ Մարգսյանին*** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի *հարյուրհիսնապատիկի* չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ *Գուրգեն Ավետիսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ***Հրաչ Մարգսյանին*** սույն որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 12
ք. Հրազդան
N 270-Ա